The only Advertising Agency for Persia and the Caucasus.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 17

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | |
|---|---|
| Թաւրիզում . . . . . . | 20 ղրան |
| Գաւառներում . . . . . . | 25 ղրան |

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

| | |
|---|---|
| Ռուսաստան . . . . . . | 4 րբ. 50 կ. |
| Թուրքիա . . . . . . | 50 ղրուշ |
| Եւրոպա . . . . . . | 12 ֆրանկ |
| Ամերիկա . . . . . . | 2,50 տոլ. |

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողերը 20 շահի
Չորրորդ ,, ,, 10 ,,
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 8 ՇԱՀԻ

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ.
ՄԻՏՔ ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal arménien ,,MITK"
Adresse télégrafique-Tauris ,,MITK"

# ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

اداره روزنامهٔ میطق

Anzeigeblatt fuer Persien

MITK

Propriétaire & Editeur en chef
Al. Der-Vartanian
Le Gérant
Mihran Baghdassarian

TERMS OF SUBSCRIPITON
for a year payable in advance. 20 krans.
Foreign Dollars 2. 50
RATES OF ADVERTISEMENTS:
one printing line on the 1-st page 10 cen.
,, ,, ,, ,, ,, 4-th ,, 5 ,,
15°/₀ discount for annual subscription paid in advance. Address
The ,,MITK" Publication Co.
Tabriz. Persia

Published by the ,,MITK" Publication Co. and Advertising Agency, Tabriz, Persia

Բ. ՏԱՐԻ № 17 ԹԱՒՐԻԶ, ՇԱԲԱԹ 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1913 Թ. Tauris, Samedi le 20 Decembre 1913 № 17 Vol. II



ԲԱՑՈՒԱԾ Է 1914 ԹՈՒԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

== Գ. ՏԱՐԻ == ,,ՄԻՏՔ" == Գ. ՏԱՐԻ ==

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

ԲԱԺԱՆԵԳԻՆՆ Է

| | | | | |
|---|---|---|---|---|
| Թաւրիզում | տարեկան | 20 ղրան, | կէս տարուան | 11 ղրան |
| Թաւրիզից դուրս | ,, | 25 ,, | կէս տարուան | 13 ղրան |
| Արտասահման | ,, | 4 ր. 50 կոպ. | կէս տարուան | 2 ր. 40 կ. |

Յայտարարութիւններ ԱՄԵՆ լեզուներով
Ապառիկ բաժանորդագրութիւն չի ընդունւում

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուզում էք ձեր մտայնութեան ժամերին լաւ խօսակից ընկեր՝ ծխեցէք միայն

եղբայր ՍԵՅԼԱՆՈՎՆԵՐԻ սեփական գործարանի

ԵԳԻՊՏԱԿԱՆ, ԻՐԻՍ, ՓԱՐՈՍ, ՊՐԻՄԱ, ՕՐԻՈԼ և ՄԱՐՍ

պապիրոսները:

Требуйте и курите только папиросы

Бр. Сейлановыхъ

Египетскій, Ирисъ, Фаросъ, Прима, Оріолъ и Марсъ.


## ՆՈՐ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԸ

Մեր ընթերցողները կյիշեն, որ ամիսներ առաջ՝ դեռ մարտին՝ № 6 «Միտքի» առաջնորդողում, մենք ահազանգն էինք հնչեցնում հայ վաճառականութեան սպառնացած վտանգի մասին: Մենք առաջ էինք բերել դէպքեր, որոնցով փաստել էինք, որ տեղական թուրք վաճառականութիւնը առևտուրն արդէն կենտրոնացրել է իր ձեռքում, որ հայը, շնորհիւ իր բազմադիմի, անհրաժեշտ և անգամ շռայլ ծախսերի, կանգնած է վտանգի առջև՝ խիստ սակաւապէտ և օրէցօր սպառնալից մրցակից դառնող թուրք վաճառականութեան շնորհիւ: Ցուցադրել էինք մենք, անհրաժեշտ են նոր ուղիներ մեր վաճառականութեան համար:

Այժմ, եղած այդ հին մրցակիցների կողքին, աւելանում են, նորերը, առաւել ճարպիկները եւ ձեռնարկուները: Դրանք մեր քաղաքը ժամանած Եւրոպական և Ռուսական ֆիրմաների զանազան ներկայացուցիչներն են, որոնք կարճ միջոցում ծանօթանալով տեղական առևտրի ձևերին, պահանջներին, շուտով կտիրեն հրապարակին և յետ կմղեն հայերին:

Ո՛վ ժամանակի հետ չի գնում, ով շարունակում է կանգնած մնալ հին՝ծանօթ ձևերի՝ առևտրի հին եղանակների կիրառման վրայ, նա յետադիմում է և պարտւում մրցման ասպարէզում:

Կար մի ժամանակ, երբ ամբողջ Հնդկաստանի առևտուրը կենտրոնացած էր Հնդկահայերի ձեռին: Եկան սառեկ ճարպիկ Անգլիացիները և նոքանեցին ու նուաստացրին հայերին և խլեցին առևտրի ասպարէզը նրանցից: Նոյնը կկրկնուի և այստեղ մեր գլխին, ինչպէս այդ տեղի ունի և Բագւում, ուր օտար ֆիրմաները մէկը միւսի ետևից խլում են հայերից նախաձեռնութեան գործը:

Մեր հայերը առնում էին սաքզա և լովլա, շարունակում ենք այսօր նոյնը և մինչ: Կա՞մ եթէ մի հայ բացում է մի մագազին, ճիշտ նրա կողքին և նոյն ապրանքներով՝ տնկւում ենք և մենք:

Այսպէս շարունակել այլ ևս չի կարելի: Պէտք է մտենալ, պէտք է կազմակերպուել. պէտք է հայկական յայսնի կապիտալն ու անվստահութիւնը մի կողմը դնել և կազմել խոշոր ընկերութիւններ և սկսել օր. գործը մի հսկայական առևտուր և այլն:

Ինչո՞ւ օտար սեղերից մարդիկ գալիս և փառաւոր օգուտներ են վերցնում զործի առևտրից, իսկ տեղացիք այդ թողած՝ պինդ կպել են միմիայն ազգի զա-լովլից: Վաղը միւս օրն էլ երբ երկաթուղին հասնի՝ նա էլ կտայ վերջին զօրեղ հարուածը՝ հնութիւնից պոկ չեկող մեր վաճառականներին: Իսկ երբ ընկնի հայ վաճառականութիւնը, նրա հետ կընկնի և կմահանայ, տնտեսական ասպարէզում, և ինքը հայ ժողովուրդը: Որովհետև վաճառականութիւնն է մի երկրի, մի ժողովրդի կենդանութեան գլխաւոր զարկերակը:

Միութեան տեսակէտից, լաւ գործ են կատարել բաղաքիս հայ յախճապակի վաճառները: Կարելի է նման միութիւններ-կամ ընկերութիւններ կազմել նաև շաքարի, մանուֆակտուրայի և այլ ապրանքների համար և այն ժամանակ արդէն կարելի է վստահ լինել, որ նոր մրցակիցները մեզ բցել և բշել չեն կարող ասպարէզից:

Ա. Տ. Վ.

## ՄՏՔԵՐ

Ոչ թէ քէչ գնեցողն է խեղճ, այլ շատ ցանկացողը: Սենեկա

Ո՛չ այնքան բարձրացիր,
Որ նախանձեմ ու կախեն,
Ո՛չ այնքան ցածացիր,
Որ քո տակից տակ կախեն:

## ՄԷԿԸ ԵՒ ԱՄԵՆՔԸ

(ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ 29 ՆՈՅԵՄԲԵՐ ՕՐԸ)

Ճշմարտութիւնը թաղուած-գոյակցութեան խղճի հետ. սակայն բարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան. կըգտնէք պատմութիւնը: Խղճալի ժողովը և «Դրշ Տնօկմանի» իսրոկան ներկայացումը լանձին Ատրպատականի հայոց «պատկառելի ներկայոյն» ժողովի անդամների. ինչո՞ւ փաստարկութիւնը կամ համակերպումը ոչխարհի «իմաստունների» քաղաքականութիւնը:

Տէր-օրէնցին: Տէր-օրեցին սպիտակ աթոռով Մարտագիմի հայոց և միակ ազատախօս պատգամաւոր պարոն Ա. Տէր Վարդանեանին պատգամաւորական ժողովում:

Ի՞նչ էր պատահել կամ բանն ինչումն էր:

— Նախորդ Թեմակալից-Տ. Կարապետ եպիսկոպոսից-ներկայ թեմակալ հայր Մելիք-Թանգեան վարդապետին, ինչպէս ասաց պատգամաւոր պ. Տէր Վարդանեանը, ժառանգութիւն էր մնացել երկու ծանր դատավարութիւն։Ա.) Քէյվանցոց և Քարիմ խանի դատը, որ վերջացել է իմնաս գիւղացոց *) և՝ ո՛չ առաջնորդարանի 40000 թումանի առաջադրած պահանջի հաստացմամբ և՝ ի վնաս հայոց առաջնորդարանի պրեստիժի: Բ.) կորուստ յայտնի Մարտիրոսաբադի. **)

Ուրիշ խօսքով, ներկայ առաջնորդի օրով և ղեկավար դատավարութեամբ՝ թեմը կրեց երկու պատմական խոշոր կորուստ՝ Քէյվանցոց դատի փոանցումն և Մարտիրոսաբադի խլումը ձեռքից: Եւ այս

*) Տե՛ս «Մշակ» № 213, առ. «Հորիզոն» № 252, 8 Նոյեմբեր.

**) Տե՛ս «Արարատ» № 7. այս բոլորը մանրամասնած դէպքերը ընդունել են իբրև fait accomplit.

